

**2. Մրցույթի ընթացքում «իրականացված գիտական փորձաքննության» վերաբերյալ դժգոհություններ:** Սկզբում ամրագրենք, որ այս մրցույթում ոչ մի գիտական փորձաքննություն չի իրականացվում կամ կազմակերպվում, այլ որոշակի ֆորմալիզացված մեթոդաբանությամբ թվային/ չափելի միավորներ են հատկացվում գիտական արդյունքներին՝ հոդվածին, մենագրությանը, զեկույցին և այլն: Մրցույթի հայտերը ներկայացվում են առցանց, որի ընթացքում հեղինակը մուտքագրում է գիտական արդյունքներն ըստ տարբեր կատեգորիաների՝ հոդված, մենագրություն, նյութերի ժողովածուի հրապարակում, զեկույց և այլն: Այնուհետև, հայտի տիտղոսաթերթը, որտեղ ամփոփ ներկայացված են, թե քանի հոդված, մենագրություն, զեկույց և այլն է մուտքագրված, և հավելվածը, որտեղ բերվում են, թե մուտքագրված տվյալներից որն է հոդված, որը մենագրություն և այլն, ներկայացվում են տպագիր տարբերակով: Տիտղոսաթերթը ստորագրվում է գիտական կազմակերպության կամ բուհի ղեկավարության կողմից և հաստատվում՝ կնիքով, ինչով իսկ հավաստվում է ներկայացված տեղեկատվության իսկությունը: Կոմիտեն, ճիշտ է, կազմակերպության ղեկավարության կողմից ստորագրված և, հետևաբար, ստուգված տեղեկատվությունը ընդունում է «ի գիտություն», այնուամենայնիվ՝ իրականացնում է ներկայացված հայտերի տեխնիկական ստուգում՝ լրացված տեղեկատվության հավաստիությունը ճշգրտելու նպատակով՝ առանց բովանդակային քննարկման կամ լրացուցիչ փորձաքննության կազմակերպման: Օրինակ, եթե որպես մենագրություն է ներկայացվում որոշակի նյութերի հավաքածուն դրա կազմողի կամ կազմողներից մեկի կողմից կամ հանրամատչելի գիրքը, ապա դրանք չպետք է դասակարգվեն որպես գիտական արդյունք և գնահատվեն որպես այդպիսին: Իսկ ինչ վերաբերում է բովանդակային քննարկմանը, ապա կոմիտեն հանդիսանում է պետական կառավարչական մարմին և մրցույթի կազմակերպիչ, իսկ կոմիտեի աշխատակիցներն էլ՝ հանրային ծառայողներ են, ոչ թե որևէ կոնկրետ ոլորտի փորձագետներ: Հետևաբար, գիտական արդյունքի բովանդակային գնահատումը նրանց անմիջական գործառույթների մեջ չի մտնում, և ավելին՝ ցանկալի էլ չէ: Եվ երկրորդ՝ կոմիտեն չպետք է կասկածի ենթարկի ինչպես գիտական կազմակերպության, բուհի, ֆակուլտետի կամ ամբիոնի գիտական խորհրդի եզրակացությունը, այնպես էլ՝ կազմակերպության ղեկավարի ստորագրությունը: Դրա հետ միասին, Գիտության կոմիտեն ամենայն պատասխանատվությամբ հայտարարում է, որ իրականացնելու է լրացուցիչ գնություն՝ եթե այս կամ այն գիտաշխատողը հայտնվել է հաղթողների շարքում ստորագրված հայտի ոչ ճիշտ տեղեկատվության առկայության պայմաններում, ապա նրա անունը կհանվի այդտեղից, իսկ, եթե թերացումը պայմանավորված է կոմիտեի աշխատակիցների աշխատանքով, ապա կպատժվեն համապատասխան աշխատակիցները: